ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հոկտեմբերի 2021 թվականի №--Ա
ք. Երևան

«ՍՏԵՓՁՈՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՏԱՇԻՐ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0625 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի նոյեմբերի 7-ի №412Ա որոշմամբ «ՍՏԵՓՁՈՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի վարչական տարածքում՝ Տաշիր գետի վրա, «Տաշիր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0625 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0625 լիցենզիա)՝ մինչև 2038 թվականի մարտի 30-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2023 թվականի մարտի 30-ը,

բ) Հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 28-ի №277Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) 1 տարի 8 ամիս ժամկետով երկարաձգվել է ԼԷ№0625 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը, ինչից ելնելով՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությունը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2 475 000 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2023 թվականի մայիսի 14-ը գործողության ժամկետով,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի սեպտեմբերի 14-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի №ԳԲ/34.1-Մ2-5/3132-2021 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը որևէ փաստարկ չի ներկայացրել,

ե) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 8-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին, Հանձնաժողովի որոշմամբ կամ գրությամբ սահմանված ժամկետում լիցենզավորված անձը Հանձնաժողով է ներկայացնում կարգին համապատասխան հաշվարկված երաշխիք,
- 8.1-րդ կետի համաձայն՝ Կարգի 8-րդ կետին համապատասխան լիցենզավորված անձի կողմից երաշխիք Հանձնաժողով չներկայացվելու դեպքում լիցենզիայի գործողությունը կասեցվում է.

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը՝ Կարգի 8-րդ կետին համապատասխան, Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքը Հանձնաժողով չի ներկայացրել, և

հիմք ընդունելով Կարգի 8.1 կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարգի 8-րդ կետին համապատասխան Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքը Հանձնաժողով չներկայացնելու համար կասեցնել ԼԷ №0625 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հոկտեմբերի 2021թ.